# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

**ՈՐՈՇՈՒՄ**

«15» փետրվարի 2024 թվականի N 449-Ա

## ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԼԱՈՒՐԱ ՏԻԳՐԱՆԻ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ ԻՐ ՄՈՐ՝ ԴԵՂՁԵՆԻԿ ԼԻՊԱՐԻՏԻ ԹԵՎՈՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2024 թվականի փետրվարի 5-ին՝ Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին է դիմել Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոց 25ա շենք 32 բնակարանի բնակիչ՝ Լաուրա Տիգրանի Ղուկասյանը (անձնագիր՝ AR0446540, տրված՝ 05.09.2017 թվականին 064-ի կողմից) խնդրելով իրեն նշանակել խնամակալ իր անգործունակ ճանաչված մոր՝ 10.11.1931 թվականին ծնված Դեղձենիկ Լիպարիտի Թևոյանի (անձնագիր՝ AR0447561, տրված՝ 06.09.2017 թվականին 064-ի կողմից) նկատմամբ:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 19.12.2023 թվականի թիվ ՇԴ/0258/02/22 վճռով Դեղձենիկ Լիպարիտի Թևոյանը ճանաչվել է անգործունակ:

«Գյումրու Հոգեկան Առողջության Կենտրոն» ՓԲԸ-ի կողմից 05.02.2024 թվականին տրված տեղեկությունների համաձայն դիմումատու՝ Լաուրա Տիգրանի Ղուկասյանը Գյումրու նյարդահոգեբուժական և նարկոլոգիական դիսպանսերներում հաշվառման մեջ չի գտնվում (տեղեկանքները կցվում են):

«Գյումրի Կենտրոն» համատիրության կողմից տրված տեղեկանքի համաձայն Լաուրա Տիգրանի Ղուկասյանը իր մոր՝ Դեղձենիկ Լիպարիտի Թևոյանի հետ բնակվում է Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոց 25ա շենք 32 բնակարանում (հիմք՝ տեղեկանք, տրված՝ 05.02.2024 թվականին):

Ելնելով անգործունակ ճանաչված Դեղձենիկ Լիպարիտի Թևոյանի շահից, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 33-րդ, 34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության դրույթներով, հիմք ընդունելով քաղաքացի Լաուրա Տիգրանի Ղուկասյանի 2024 թվականի փետրվարի 5-ի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված թիվ 2125 թվագրությամբ) և Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2024 թվականի փետրվարի 13-ի նիստի արձանագրությամբ տրված եզրակացությունը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Սահմանել խնամակալություն՝ Լաուրա Տիգրանի Ղուկասյանին (անձնագիր՝ AR0446540) նշանակել խնամակալ թիվ ՇԴ/0258/02/22 վճռով անգործունակ ճանաչված իր մոր՝ 10.11.1931 թվականին ծնված Դեղձենիկ Լիպարիտի Թևոյանի (անձնագիր՝ AR0447561) նկատմամբ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Լաուրա Տիգրանի Ղուկասյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

14.02.2024

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** X **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«15» փետրվարի 2024 **թվականի** N 448-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 07-Ի N 367-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի փետրվարի 07-ի «Քաղաքացի Կարինե Մամիկոնի Մովսիսյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Շիրակացի փողոցի N 13/25 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 171.4 քառակուսի մետր արտաքին 158.12 քառակուսի մետր ներքին մակերեսով հասարակական շինությունն օրինական ճանաչելու և հողամասի գործառնական նշանակությունը փոփոխելու մասին» N 367-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն է առաջացել, քանի որ որոշման մեջ տեղի է ունեցել վրիպում:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով, 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի փետրվարի 07-ի «Քաղաքացի Կարինե Մամիկոնի Մովսիսյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Շիրակացի փողոցի N 13/25 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 171.4 քառակուսի մետր արտաքին 158.12 քառակուսի մետր ներքին մակերեսով հասարակական շինությունն օրինական ճանաչելու և հողամասի գործառնական նշանակությունը փոփոխելու մասին» N 367-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
   1) Որոշման 5-րդ կետում «Սիլվա Հովհաննեսի Հովհաննիսյանին» բառերը փոխարինել «Կարինե Մամիկոնի Մովսիսյանին» բառերով,
   2) Նախաբանի 3-րդ պարբերությունում «Սիլվա» բառը հանել:

12.02.2024

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2024թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**«15» փետրվարի 2024 թվականի N 447-Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 22-Ի N 118-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի հունվարի 22-ի N 118-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է առաջացել, որոշման մեջ տեղ գտած սխալի պատճառով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի հունվարի 22-ի <<Քաղաքացիներ Աննիկ Խաչատուրի Շալյապինային 2/4 մաս, Սեմյոն Ալեքսանդրի Շալյապինին 1/4 մաս և Խաչատուր Ալեքսանդրի Շալյապինին 1/4 մաս ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Հնոցավան 2-րդ շարք N 35 հասցեի տան հողամասում կառուցված 32,65 քառակուսի մետր ներքին մակերեսով շինությունները օրինական ճանաչելու և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող 212,14 քառ.մ մակերեսով հողամասի և նրա վրա առկա շինության կարգավիճակի մասին>> N 118-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
   1) որոշման 4-րդ կետում <<Աննա>> բառը փոխարինել <<Աննիկ>> բառով:

14.02.2024

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**ք.Գյումրի**
**2024 թ.**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«15» փետրվարի **2024 թվականի № 446-Ա**

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՊՈՒՇԿԻՆԻ ՓՈՂՈՑ, 7-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ, 3Բ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №2296386) ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Ռուզաննա Պետրոսյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №2306 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Գյումրի քաղաք, Պուշկինի փողոց, 7-րդ նրբանցք, 3բ բնակելի տուն հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական №2296386) վերահասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ա. Պուշկինի փողոց, 7-րդ նրբանցք, 3/2 բնակելի տուն**

Недействительная подпись
X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am


# ՈՐՈՇՈՒՄ

«15» սեպտեմբերի 2024 թվականի № 445-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՄԱՅԱԿՈՎՍԿՈՒ ՓՈՂՈՑ, 70 ՏԱՂԱՎԱՐ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №2020251) ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Նաիրա Վարդանյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №2336 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաք, Մայակովսկու փողոց, 70 տաղավար հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական №2020251) վերահասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Վ. Մայակովսկու փողոց, 36/1 տաղավար**

X Недействительная подпись

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024 թ. ք. Գյումրի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«15» նոյեմբերի 2024 թվականի № 444-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Շ. ՏԱԼՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 42,02 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-1221-0001) ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Գյումրի քաղաքի Շ. Տալյան փողոցի հարևանությամբ գտնվող 42,02 քառակուսի մետր հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-1221-0001) տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Շ. Տալյան փողոց, 5/15 հողամաս**

Недействительная подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«15» փետրվարի 2024 թվականի № 443-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԹԲԻԼԻՍՅԱՆ ԽՃՈՒՂՈՒ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 67,5 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-1210-0003) ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղու հարևանությամբ գտնվող 67,5 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-1210-0003) տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Թբիլիսյան խճուղի, 7/2 հողամաս**

14.02.2024

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ X Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«15» փետրվարի 2024 **թվականի** N 442 -Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Մ.ԹԵՏՉԵՐԻ ՓՈՂՈՑ N 10/1 ՀԱՍՑԵԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԸ ՉԵՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Նկատի ունենալով, որ անշարժ գույքի պահպանման և սպասարկման համար քաղաքացի Նիկոլայ Ձվակերյանին վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրված Գյումրի քաղաքի Թետչերի փողոց N 10/1 հասցեում գտնվող (կադաստրային ծածկագիր 08-001-0441-0019) համայնքային սեփականություն հանդիսացող 936,76 քառակուսի մետր մակերեսով հողամասը նպատակային չի օգտագործվում՝ հողամասի վրա գտնվող անշարժ գույքի նկատմամբ, առուվաճառքի պայմանագրով (հիմք՝ 2020 թվականի սեպտեմբերի 24-ի անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրով, գրանցված գրանցամատյանում թիվ 4617), սեփականության իրավունք ստացած քաղաքացի Նադեժդա Սարոյանի կողմից անշարժ գույքը քանդելու հետևանքով (հիմք՝ չափագրողի որակավորում ունեցող անձի եզրակացությունը նշված հողամասում շինություն գոյություն չունենալու մասին), հաշվի առնելով քաղաքացի Նադեժդա Սարոյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականի փետրվարի 05-ին N 2168 թվագրմամբ), ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Շիրակի մարզային ստորաբաժանում՝ չեղարկել Գյումրի քաղաքի Մ.Թետչերի փողոց N 10/1 հասցեի անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 07092020-08-0002 վկայականը:

14.02.2024

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** ______ **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2024 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## ՈՐՈՇՈՒՄ

<<14>> փետրվարի 2024 թվականի N 441 -Ա

### ՇՈՒՌԻԿ ՀԱՅԿԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ, 59-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետերով, <<Համայնքային ծառայության մասին>> օրենքի 18-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 13-ի N 1002-Ն որոշմամբ հաստատված կարգի 18-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալի 2024 թվականի փետրվարի 8-ի թիվ 02.1//01202-2024 գրությունը, Շուռիկ Հայկի Հակոբյանի 2024 թվականի փետրվարի 13-ի դիմումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Շուռիկ Հայկի Հակոբյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բյուջեի եկամուտների հավաքագրման բաժնի պետի ( ծածկագիր՝ 2.1-5 ) ժամանակավոր պաշտոնակատար՝ 2024 թվականի փետրվարի 15-ից:
2. Շուռիկ Հայկի Հակոբյանի հետ կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր՝ 2024 թվականի փետրվարի 15-ից մինչև համայնքային ծառայության նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի նշանակումը:
3. Աշխատավարձը սահմանել համաձայն պաշտոնային դրույքաչափի՝ ամսական 286.000 (երկու հարյուր ութսունվեց հազար ) Հայաստանի Հանրապետության դրամ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Շուռիկ Հայկի Հակոբյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

14.02.2024

X

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ու Մ

<<14>> փետրվարի 2024 թվականի N 940-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ԼԵՆԱ ՎԱՂԻՆԱԿԻ ՋԻԼԱՎՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՐԱԽՈՒՍԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Իր աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի խորհրդական Լենա Վաղինակի Ջիլավյանի նկատմամբ կիրառել խրախուսանք՝ միանվագ դրամական պարգևատրման տեսքով՝ մեկ ամսվա պաշտոնային դրույքաչափով:
2. Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ- գլխավոր ֆինանսիստին՝ վճարումը կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Լենա Վաղինակի Ջիլավյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

14.02.2024

X

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«14» փետրվարի 2024 թվականի № 439-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, Խ. ԿՈՇՏՈՅԱՆ ՓՈՂՈՑ, 14/5 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0460-0033) ԵՎ Խ. ԿՈՇՏՈՅԱՆ ՓՈՂՈՑ, 14/8 ՀՈՂԱՄԱՍ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0460-0044) ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Ալիկ Հակոբյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №2705 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Գյումրի քաղաք, Խ. Կոշտոյան փողոց, 14/5 բնակելի տուն (կադաստրային ծածկագիր 08-001-0460-0033) և Խ. Կոշտոյան փողոց, 14/8 հողամաս (կադաստրային ծածկագիր 08-001-0460-0044) հասցեագրությամբ անշարժ գույքերի միավորումից առաջացած անշարժ գույքը հասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Խ. Կոշտոյան փողոց, 14/5 բնակելի տուն**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«14» փետրվարի 2024 թվականի № 438-Ա

## ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԲՈՒԼՎԱՐԱՅԻՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 4380,0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0229-0001, 0005) ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդհոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաքի Բուլվարային փողոցի հարևանությամբ գտնվող 4380,0 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-0229-0001, 0005) տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Բուլվարային փողոց, 16 հողամաս**

Недействительная подпись
X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«14» փետրվարի 2024 **թվականի** N 437-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ՌԱՖԻԿ ՊԱՊԱՅԻ ՉՎԱԿԵՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՅՎԱԶՈՎՍԿԻ ՓՈՂՈՑ № 15/5 ՀԱՍՑԵԻ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 156.2 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի Ռաֆիկ Պապայի Չվակերյանին պատկանող (հիմք՝ տեխնիկական անձնագիր տրված 30 հունիսի 1986թվական, համար 122ա) Գյումրի քաղաքի Այվազովսկի փողոց № 15/5 հասցեի տան օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 156.2 (մեկ հարյուր հիսունվեց ամբողջ երկու տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամաս:

Քաղաքացի Ռաֆիկ Պապայի Չվակերյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին նշված հողամասի և շինության նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունը չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ հոդվածով, 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1 կետի և հիմք ընդունելով քաղաքացի Ռաֆիկ Պապայի Չվակերյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի հուլիսի 27-ին № 15750 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Ճանաչել քաղաքացի Ռաֆիկ Պապայի Չվակերյանի (ծնված 1943 թվականի օգոստոսի 17-ին) և ընդհանուր բակի մյուս համասեփականատերերի ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Այվազովսկի փողոց № 15/5 հասցեի տան կառուցապատման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող 156.2 (մեկ հարյուր հիսունվեց ամբողջ երկու տասնորդական) քառակուսի մետր մակերեսով ընդհանուր բակի և նրա վրա առկա շինությունների նկատմամբ:
2. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

   Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Ռաֆիկ Պապայի Չվակերյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

13.02.2024

X

**Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2024թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*էլ. փոստ gyumri@gyumri.am*

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**«__14__»__փետրվարի__ 2024 թվականի N__436__-Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 08-Ի N 2005-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի օգոստոսի 08-ի N 2005-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն է առաջացել, չափագրական նյութերում տեղ գտած սխալի պատճառով (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 17/01/2024 թվականի N Կ-17012024-08-0142 որոշում): Ներկայացվել է նոր ճշտգրված չափագրություն:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի օգոստոսի 08-ի <<Քաղաքացիներ Էդվարդ Ալբերտի Աղեկյանին, Էդգար Էդվարդի Աղեկյանին, Սիրանուշ Էդուարդի Հովհաննիսյանին և Արաքսյան Հակոբի Ղևոնդյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ղուկասյան փողոց N 161/2 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 77,14 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակը օրինական ճանաչելու մասին>> N 2005-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) վերնագրում, նախաբանում, որոշման 1-ին կետում <<77,14 (յոթանասունյոթ ամբողջ տասնչորս հարյուրերորդական)>> թիվը և բառերը փոխարինել <<74,25(յոթանասունչորս ամբողջ քսանհինգ հարյուրերորդական)>> թվով և բառերով.

2) նախաբանում << 22 կետի >> թվից և բառից հետո լրացնել <<2-րդ կետի գ) ենթակետի>> թվերը և բառերը.

3) որոշման 1-ին կետում <<178656(մեկ հարյուր յոթանասունութ հազար վեց հարյուր հիսունվեց)>> թիվը և բառերը փոխարինել <<171963(մեկ հարյուր յոթանասունմեկ հազար ինը հարյուր վաթսուներեք)>> թվով և բառերով.

5) որոշման 1-ին կետում <<դրամ>> բառից հետո լրացնել <<2,89 (երկու ամբողջ ութսունինը հարյուրերորդական) >> քառակուսի մետր մակերեսով շինությունները թողնել ինքնակամ, քանի որ օրենքով նախատեսված ժամկետներում Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշմամբ սահմանված կարգով չեն հաշվառվել:

13.02.2024

X

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**ք.Գյումրի**
**2024 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

**ՈՐՈՇՈՒՄ**

**«14» փետրվարի 2024 թվականի N 435-Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 24-Ի N 2119-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի օգոստոսի 24-ի N 2119-Ա որոշման մեջ լրացում կատարելու անհրաժեշտություն է առաջացել, որոշման մեջ տեղ գտած վրիպակի պատճառով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի օգոստոսի 24-ի <<Քաղաքացի Հմայակ Կոստանի Զաքարյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Շահումյան փողոց N 288 հասցեի տան օրինական հողամասին կից ավել օգտագործվող 408,74 քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա վրա առկա 98,23 քառակուսի մետր ներքին մակերեսով շինությունների կարգավճակի մասին>> N 2119-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը՝

1) նախաբանում <<ծածկագրով>> բառից առաջ լրացնել << և 2023SAUS6H>> թիվը:

13.02.2024

X

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**ք.Գյումրի**
**2024 թ.**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

**ՈՐՈՇՈՒՄ**

**«14» փետրվարի 2024 թվականի N 434-Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՆԱՐ-ԴՈՍԻ ՓՈՂՈՑ N 30 ՀԱՍՑԵԻ 220,26 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԴՐԱ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱՑԻ ԱՌԿԱ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՎԱԾ 430,8 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻ ԱԼԻԵՏԱ ԼԱԴՈՅԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Նար-Դոսի փողոց N 30 հասցեում, մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, 430,8 (չորս հարյուր երեսուն ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասում կառուցվել է 220,26 (երկու հարյուր քսան ամբողջ քսանվեց հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի տուն, որի նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, հողհատկացման հիմքերը ու այն փաստացի տիրապետում և օգտագործում է քաղաքացի Ալիետա Լադոյի Խաչատրյանը:

Քաղաքացի Ալիետա Խաչատրյանի լիազորված անձ Արմեն Խոցանյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ հողամասի և բնակելի տան նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, որ շինությունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> օրենքի 1-ին և 3-րդ հոդվածներով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 43-րդ հոդվածով, հիմք ընդունելով ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2023F7XZSU ծածկագիրը և քաղաքացի Ալիետա Խաչատրյանի լիազորված անձ Արմեն Խոցանյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականի հունվարի 31-ին N 1886 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Ճանաչել քաղաքացի Ալիետա Լադոյի Խաչատրյանի (ծնված 1965 թվականի սեպտեմբերի 14-ին), սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Նար-Դոսի փողոց N 30 հասցեում գտնվող 400(չորս հարյուր) քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա վրա առկա 220,26 (երկու հարյուր քսան ամբողջ քսանվեց հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի տան նկատմամբ:
2. Գյումրի քաղաքի Նար-Դոսի փողոց N 30 հասցեին կից, սահմանված չափից ավել օգտագործվող 30,8 (երեսուն ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացի Ալիետա Լադոյի Խաչատրյանին՝ տվյալ հողամասի կադաստրային գնով, որը կազմում է 10514 (տասը հազար հինգ հարյուր տասնչորս) Հայաստանի Հանրապետության դրամ 1(մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 323831 (երեք հարյուր քսաներեք հազար ութ հարյուր երեսունմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Սահմանված կարգով կնքել ավել օգտագործվող 30,8 (երեսուն ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի առուվաճառքի պայմանագիր /պատասխանատու քաղաքաշինության և հողօգտագործման բաժին/:
5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում քաղաքացի Ալիետա Լադոյի Խաչատրյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

13.02.2024

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՝** X **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**ք.Գյումրի**
**2024 թ.**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«14» փետրվարի 2024 թվականի N 433-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇԻՐԱԿԱՑՈՒ ՓՈՂՈՑ N 11/29 ՀԱՍՑԵԻ 420,8 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՇԻՐԱԿ-4 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹՈՒՄ ՆԵՐԱՌՆՎԱԾ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԾԱԳՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Շիրակացու փողոց 11/29 հասցեի 420,8 (չորս հարյուր քսան ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում ներառնված Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 22-ի N 124-Ա որոշմամբ հաստատված Գյումրի քաղաքի գլխավոր հատակագծի հեռանկարային զարգացման գծագրով հանդիսանում է բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամաս: Սակայն Գյումրի քաղաքի Շիրակացու փողոց 11/29 հասցեի 420,8 (չորս հարյուր քսան ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը պետական գրանցում է ստացել որպես՝ բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողամաս (հիմք՝ հիմք անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 19012017-08-0008 վկայականը): Նշված տարածքում կառուցապատում իրականացնելու նպատակով կարիք է առաջացել փոփոխել նշված հողամասի գործառնական նշանակությունը:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Շիրակացու փողոց 11/29 հասցեի 420,8 (չորս հարյուր քսան ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման հողեր գործառնական նշանակությունից փոփոխել և համապատասխանեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում ներառնված Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 22-ի N 124-Ա որոշմամբ հաստատված Գյումրի քաղաքի գլխավոր հատակագծի հեռանկարային զարգացման գծագրին՝ բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատում գործառնական նշանակության:

13.02.2024

**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** x **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2024 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


**ՈՐՈՇՈՒՄ**

**«14» փետրվարի 2024 թվականի N 432-Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 21-Ի N 2916-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 27 -Ի N 1871-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի հուլիսի 27-ի <<Քաղաքացիներ Տանյա Խաչատուրի Սարգսյանին և Հարություն Ժորժիկի Սարգսյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Կոմինտերնի փողոց 2-րդ շարք N 1/1 հասցեի տան կառուցապատման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող 58,42 քառակուսի մետր մակերեսով հողամասի, նրա վրա առկա շինության և սեփականության իրավունքով իրենց պատկանող հողամասում ինքնակամ կառուցված 22,66 քառակուսի մետր ներքին մակերեսով շինությունները, 2001թվ. մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցված 32,73 քառակուսի մետր արտաքին մակերեսով շինությունները, ինքնակամ փակված 1 դուռը, ինքնակամ բացված 1 դուռը, ինքնակամ բացվածքի ձևափոխված 1 պատուհանը օրինական ճանաչելու մասին>> N 1871-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն է առաջացել, չափագրության մեջ տեղ գտած սխալի պատճառով (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 05/02/2024 թվականի N Կ-05022024-08-0122 որոշում): Ներկայացվել է նոր ճշտգրված չափագրություն:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 3-րդ մասով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի հուլիսի 27-ի <<Քաղաքացիներ Տանյա Խաչատուրի Սարգսյանին և Հարություն Ժորժիկի Սարգսյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Կոմինտերնի փողոց 2-րդ շարք N 1/1 հասցեի տան կառուցապատման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող 58,42 քառակուսի մետր մակերեսով հողամասի, նրա վրա առկա շինության և սեփականության իրավունքով իրենց պատկանող հողամասում ինքնակամ կառուցված 22,66 քառակուսի մետր ներքին մակերեսով շինությունները, 2001թվ. մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցված 32,73 քառակուսի մետր արտաքին մակերեսով շինությունները, ինքնակամ փակված 1 դուռը, ինքնակամ բացված 1 դուռը, ինքնակամ բացվածքի ձևափոխված 1 պատուհանը օրինական ճանաչելու մասին>> N 1871-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) վերնագրում, նախաբանում <<58,42(հիսունութ ամբողջ քառասուներկու հարյուրերորդական)>> թիվը և բառերը փոխարինել <<58,96(հիսունութ ամբողջ իննսունվեց հարյուրերորդական)>> թվով և բառերով.
2) որոշման 1-ին կետում <<58,42 ( հիսունութ ամբողջ քառասուներկու հարյուրերորդական)>> թիվը և բառերը փոխարինել <<43,02(քառասուներեք ամբողջ երկու հարյուրերորդական)>> թվով և բառերով .
3) որոշումը լրացնել $1^{1}$. կետով հետևյալ բովանդակությամբ.
4) <<$1^{1}$. Ճանաչել քաղաքացիներ Տանյա Խաչատուրի Սարգսյանի (ծնված 1940 թվականի հունիսի 25-ին), Հարություն Ժորժիկի Սարգսյանի (ծնված 1963 թվականի մարտի 10-ին) և ) և ընդհանուր բակի մյուս համասեփականատերերի սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Կոմինտերնի փողոց 2-րդ շարք N 1/1 հասցեի բնակելի տան օրինական հողամասին կից ավել օգտագործվող 15,94 (տասնհինգ ամբողջ իննսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով անկառուցապատ հողամասի նկատմամբ:>>:

2. Գյումրի համայնքի ղեկավարի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի հուլիսի 27-ի N 1871-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> 2023 թվականի նոյեմբերի 23-ի N 2916-Ա որոշումը ճանաչել ուժը կորցրած:

13.02.2024

X

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**ք.Գյումրի**
**2024 թ.**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

«14» փետրվարի 2024 **թվականի** N 431-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 3175-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի դեկտեմբերի 19-ի «Քաղաքացիներ Արթուր Սերյոժայի Խաչատրյանին (32/36 մաս), Մկրտիչ Մերուժանի Թարզյանին (2/36 մաս), Գարիկ Հովհաննեսի Խաչատրյանին (1/36 մաս) և Արփիկ Հովհաննեսի Խաչատրյանին (1/36 մաս) սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Թումանյան փողոցի N 84 հասցեի բնակելի տան օրինական հողամասում ինքնակամ կառուցված 46.99 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները, ինքնակամ փակված 1 պատուհանն օրինական ճանաչելու եվ օրինական հողամասին կից ավել օգտագործվող 12.5 քառակուսի մետր մակերեսով հողամասի կարգավիճակի մասին» N 3175-Ա որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու անհրաժեշտություն է առաջացել, քանի որ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը կասեցվել է:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 3-րդ մասով, 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի դեկտեմբերի 19-ի «Քաղաքացիներ Արթուր Սերյոժայի Խաչատրյանին (32/36 մաս), Մկրտիչ Մերուժանի Թարզյանին (2/36 մաս), Գարիկ Հովհաննեսի Խաչատրյանին (1/36 մաս) և Արփիկ Հովհաննեսի Խաչատրյանին (1/36 մաս) սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Թումանյան փողոցի N 84 հասցեի բնակելի տան օրինական հողամասում ինքնակամ կառուցված 46.99 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները, ինքնակամ փակված 1 պատուհանն օրինական ճանաչելու եվ օրինական հողամասին կից ավել օգտագործվող 12.5 քառակուսի մետր մակերեսով հողամասի կարգավիճակի մասին» N 3175-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը՝
   1) Վերնագրում, նախաբանում և որոշման 2-րդ կետում «պատուհան» բառից հետո լրացնել «և 1 (մեկ) ինքնակամ բացված պատուհան» թիվը և բառերը,
   2) Որոշման 2-րդ կետում «3206 (երեք հազար երկու հարյուր վեց)» թիվը և բառերը փոխարինել «6412 (վեց հազար չորս հարյուր տասներկու)» թվերով և բառերով:

14.02.2024

X

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2024թ. ք.Գյումրի**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«14» [illegible] 2024 **թվականի** N 430-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ԷԴՎԱՐԴ ԱՐԹՈՒՐԻ ԲԱԴԱԼՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՓՈՂՈՑԻ N 33/5 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 476.99 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ 376.1 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ, 8.1 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՊԱՐԻՍՊՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի Էդվարդ Արթուրի Բադալյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Խրիմյան Հայրիկի փողոցի N 33/5 հասցեի հողամասում 2001 թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցված է 476.99 (չորս հարյուր յոթանասունվեց ամբողջ իննսունինը հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին 376.1 (երեք հարյուր յոթանասունվեց ամբողջ մեկ տասնորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություն, 8.1 (ութ ամբողջ մեկ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով պարիսպ, որոնք հաշվառված են Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում 2023KPGKLK ծածկագրով:

Քաղաքացի Էդվարդ Արթուրի Բադալյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին նշված շինություններն օրինական ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունները չեն գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի, 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22-րդ կետի և հիմք ընդունելով քաղաքացի Էդվարդ Արթուրի Բադալյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականի հունվարի 22-ին N 1192 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Քաղաքացի Էդվարդ Արթուրի Բադալյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Խրիմյան Հայրիկի փողոցի N 33/5 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 476.99 (չորս հարյուր յոթանասունվեց ամբողջ իննսունինը հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին 376.1 (երեք հարյուր յոթանասունվեց ամբողջ մեկ տասնորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունը, 8.1 (ութ ամբողջ մեկ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով պարիսպը ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 1123468 (մեկ միլիոն մեկ հարյուր քսաներեք հազար չորս հարյուր վաթսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Գյումրի քաղաքի Խրիմյան Հայրիկի փողոցի N 33/5 հասցեի 400.0 (չորս հարյուր) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակությունից փոփոխել բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:
3. Օրինականացման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60 օրվա ընթացքում չվճարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Էդվարդ Արթուրի Բադալյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

12.02.2024

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2024թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«14» կետրվարի 2024 **թվականի** N 429-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԼԱՐԻՍԱ ԱՐԵՍՏԱԿԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ (2/3 ՄԱՍ), ՀՈՎՀԱՆՆԵՍ ՋԱԼԻԲԵԿԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ (1/6 ՄԱՍ) ԵՎ ԱԼԻՆԱ ՋԱԼԻԲԵԿԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ (1/6 ՄԱՍ) ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄԱՏՆԻՇՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 229 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 58.35 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քաղաքացիներ Լարիսա Արեստակի Սարգսյանին (2/3 մաս), Հովհաննես Ջալիբեկի Սարգսյանին (1/6 մաս) և Ալինա Ջալիբեկի Սարգսյանին (1/6 մաս) ժառանգության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Մատնիշյան փողոցի N 229 հասցեի տան հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցված է 47.75 (քառասունյոթ ամբողջ յոթանասունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ, իսկ 2001 թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցված է 14.94 (տասնչորս ամբողջ իննսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի շինություններ, որոնք հաշվառված են Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում 20232ST7XU ծածկագրով:

Քաղաքացի Հովհաննես Ջալիբեկի Սարգսյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին նշված շինություններն օրինական ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունները չեն գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22-րդ կետի, 22.1 կետի և հիմք ընդունելով քաղաքացի Հովհաննես Ջալիբեկի Սարգսյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի հոկտեմբերի 23-ին N 22855 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Քաղաքացիներ Լարիսա Արեստակի Սարգսյանին (2/3 մաս), Հովհաննես Ջալիբեկի Սարգսյանին (1/6 մաս) և Ալինա Ջալիբեկի Սարգսյանին (1/6 մաս) ժառանգության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Մատնիշյան փողոցի N 229 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 47.75 (քառասունյոթ ամբողջ յոթանասունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները և 14.94 (տասնչորս ամբողջ իննսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի շինությունները ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 47898 (քառասունյոթ հազար ութ հարյուր իննսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Օրինականացման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60 օրվա ընթացքում չվճարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Լարիսա Արեստակի Սարգսյանին, Հովհաննես Ջալիբեկի Սարգսյանին և Ալինա Ջալիբեկի Սարգսյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

12.02.2024

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2024թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«14» դեկտեմբերի 2024 **թվականի** N 428-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՀՐԱՉԻԿ ՄԿՐՏՉԻ ՔԵՐՈԲՅԱՆԻՆ ԵՎ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՄԿՐՏՉԻ ՔԵՐՈԲՅԱՆԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 162 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 174.73 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քաղաքացիներ Հրաչիկ Մկրտչի Քերոբյանին և Համբարձում Մկրտչի Քերոբյանին ժառանգության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Սունդուկյան փողոցի N 162 հասցեի տան հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցված է 174.73 (մեկ հարյուր յոթանասունչորս ամբողջ յոթանասուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի տուն:

Քաղաքացի Հրաչիկ Մկրտչի Քերոբյանի կողմից լիազորված անձ Նելլի Հալաջյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին նշված շինությունն օրինական ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունը չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1 կետի և հիմք ընդունելով քաղաքացի Հրաչիկ Մկրտչի Քերոբյանի կողմից լիազորված անձ Նելլի Հալաջյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի հոկտեմբերի 16-ին N 22180 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Քաղաքացիներ Հրաչիկ Մկրտչի Քերոբյանին և Համբարձում Մկրտչի Քերոբյանին ժառանգության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Սունդուկյան փողոցի N 162 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 174.73 (մեկ հարյուր յոթանասունչորս ամբողջ յոթանասուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի տունը ճանաչել օրինական:
2. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Հրաչիկ Մկրտչի Քերոբյանին և Համբարձում Մկրտչի Քերոբյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

12.02.2024

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** X **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2024թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«__11__» __փետրվարի__ 2024 **թվականի** N__427-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ԳՐԵՏԱ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 165 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 188.73 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 68.63 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի Գրետա Շիրակի Մարգարյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Մյասնիկյան փողոցի N 165 հասցեի բնակելի տան օրինական հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցված է 188.73 (մեկ հարյուր ութսունութ ամբողջ յոթանասուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի տուն և օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 68.63 (վաթսունութ ամբողջ վաթսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով սահմանազատված հողամաս, որի վրա առկա բնակելի տունը կառուցված է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:

Քաղաքացի Գրետա Շիրակի Մարգարյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին նշված հողամասի և շինությունների նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունները չեն գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ հոդվածով, 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1-րդ կետի և հիմք ընդունելով քաղաքացի Գրետա Շիրակի Մարգարյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի հոկտեմբերի 16-ին N 22178 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Ճանաչել քաղաքացի Գրետա Շիրակի Մարգարյանի (ծնված 1949 թվականի սեպտեմբերի 21-ին) սեփականության իրավունքը սեփականության իրավունքով իրեն պատկանող, Գյումրի քաղաքի Մյասնիկյան փողոցի N 165 հասցեի բնակելի տան օրինական հողամասին կից, ավել օգտագործվող 68.63 (վաթսունութ ամբողջ վաթսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով սահմանազատված հողամասի և նրա վրա առկա բնակելի տան նկատմամբ:
2. Քաղաքացի Գրետա Շիրակի Մարգարյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Մյասնիկյան փողոցի N 165 հասցեի բնակելի տան օրինական հողամասում ինքնակամ կառուցված 188.73 (մեկ հարյուր ութսունութ ամբողջ յոթանասուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի տունը ճանաչել օրինական:
3. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Գրետա Շիրակի Մարգարյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Недействительная подпись

X

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«14» փետրվարի 2024 **թվականի** N 426-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 165 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ 6.06 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 6.06 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի Գրետա Շիրակի Մարգարյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Մյասնիկյան փողոցի N 165 հասցեի տան օրինական հողամասին կից 6.06 (վեց ամբողջ վեց հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցվել է 6.06 (վեց ամբողջ վեց հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով աստիճաններ, որը տիրապետում և օգտագործում է քաղաքացի Գրետա Շիրակի Մարգարյանը:

Նկատի ունենալով, որ շինության պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հաշվի առնելով, որ շինությունը կառուցված է հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Մյասնիկյան փողոցի N 165 հասցեի տան օրինական հողամասին կից 6.06 (վեց ամբողջ վեց հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասը և նրա վրա ինքնակամ կառուցված 6.06 (վեց ամբողջ վեց հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով աստիճանները համարել համայնքի սեփականություն:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված շինությունը և հողամասը նախապատվության իրավունքով վարձակալության առաջարկություն անել քաղաքացի Գրետա Շիրակի Մարգարյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը (պատասխանատու՝ քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** X **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2024թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«14» փետրվարի 2024 **թվականի** N 425-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՎԶՆՈՑ ՓՈՂՈՑԻ N 44 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻ ՍԱՐԳԻՍ ՍԼԱՎԻԿԻ ԷԼԲԱԿՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՌՈՒՑՎԱԾ 69.06 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱՑԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ 76.7 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Ավզնոց փողոցի N 44 հասցեի համայնքապատկան հողամասում, մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցվել է բնակելի շինություններ, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, հողհատկացման հիմքերը և այն փաստացի տիրապետում և օգտագործում է քաղաքացի Սարգիս Սլավիկի Էլբակյանը:

Քաղաքացի Սարգիս Սլավիկի Էլբակյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին հողամասի և բնակելի շինությունների նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով, որ շինությունները չեն գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 1-ին և 3-րդ հոդվածներով և հիմք ընդունելով շինությունները Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2023UCFZHJ ծածկագիրը և քաղաքացի Սարգիս Սլավիկի Էլբակյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի հոկտեմբերի 19-ին N 22626 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Ճանաչել քաղաքացի Սարգիս Սլավիկի Էլբակյանի (ծնված 1990 թվականի հոկտեմբերի 24-ին) սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Ավզնոց փողոցի N 44 հասցեում գտնվող 76.7 (յոթանասունվեց ամբողջ յոթ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա վրա առկա 69.06 (վաթսունինն ամբողջ վեց հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունների նկատմամբ:
2. Ճանաչել քաղաքացի Սարգիս Սլավիկի Էլբակյանի (ծնված 1990 թվականի հոկտեմբերի 24-ին) և ընդհանուր բակում առկա, իրեն պատկանող շինությանը կից կառուցված բնակելի տան տնօրինողի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Ավզնոց փողոցի N 44 հասցեում գտնվող 5.28 (հինգ ամբողջ քսանութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա վրա առկա 4.87 (չորս ամբողջ ութսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինության նկատմամբ:
3. Ճանաչել քաղաքացի Սարգիս Սլավիկի Էլբակյանի (ծնված 1990 թվականի հոկտեմբերի 24-ին) և ընդհանուր բակում առկա, մյուս բոլոր բնակելի տների տնօրինողների ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Ավզնոց փողոցի N 44 հասցեում գտնվող 121.33 (մեկ հարյուր քսանմեկ ամբողջ երեսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա վրա առկա 0.69 (զրո ամբողջ վաթսունինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով պարսպի նկատմամբ:

4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
5. Հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման ծախսերը կատարել քաղաքացի Սարգիս Սլավիկի Էլբակյանի միջոցների հաշվին:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Սարգիս Սլավիկի Էլբակյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

12.02.2024

X

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2024թ. ք.Գյումրի**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«14» փետրվարի 2024 **թվականի** N 424-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԹԲԻԼԻՍՅԱՆ ԽՃՈՒՂՈՒ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ 68.89 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 68.89 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ 56.98 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղու հարևանությամբ 68.89 (վաթսունութ ամբողջ ութսունինը հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում 2001 թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցվել է 68.89 (վաթսունութ ամբողջ ութսունինը հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին 56.98 (հիսունվեց ամբողջ իննսունութ հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով ավտոտնակ, որը տիրապետում և օգտագործում է քաղաքացի Սաթիկ Լևոնի Սերոբյանը:

Նկատի ունենալով, որ շինության պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի, 4-րդ բաժնի 33-րդ կետի և հիմք ընդունելով ինքնակամ շինությունը Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող N 2023E6TEFH տեղեկանքը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղու հարևանությամբ 68.89 (վաթսունութ ամբողջ ութսունինը հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասը և նրա վրա ինքնակամ կառուցված 68.89 (վաթսունութ ամբողջ ութսունինը հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին 56.98 (հիսունվեց ամբողջ իննսունութ հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով ավտոտնակը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
2. Չափագրական փաստաթղթերում նշված 25.28 (քսանհինգ ամբողջ քսանութ հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով մանսարդը համարել ավտոտնակի տանիք, իսկ 2.52 (երկու ամբողջ հիսուներկու հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով աստիճանները թողնել ինքնակամ:
3. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել քաղաքացի Սաթիկ Լևոնի Սերոբյանին:
4. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը (պատասխանատու՝ քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):
5. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

12.02.2024

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2024թ. ք.Գյումրի**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«14» փետրվարի 2024 **թվականի** N 423-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ԱԻԴԱ ԹԵԼՄԱՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԾՆՆԴԱՏԱՆ ՓՈՂՈՑԻ N 9/2 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 101.24 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ 78.72 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՆԱՎԱՐՏ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի Աիդա Թելմանի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ծննդատան փողոցի N 9/2 հասցեի հողամասում 2001 թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցված է 101.24 (մեկ հարյուր մեկ ամբողջ քսանչորս հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին, 78.72 (յոթանասունութ ամբողջ յոթանասուներկու հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով անավարտ բնակելի տուն, որը հաշվառված է Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում N 202322WNFY ծածկագրով:

Քաղաքացի Աիդա Թելմանի Հովհաննիսյանի կողմից լիազորված անձ Տելման Հովհաննիսյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին նշված շինությունն օրինական ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունը չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22-րդ կետի և հիմք ընդունելով քաղաքացի Աիդա Թելմանի Հովհաննիսյանի կողմից լիազորված անձ Տելման Հովհաննիսյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի հոկտեմբերի 20-ին N 22774 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Քաղաքացի Աիդա Թելմանի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ծննդատան փողոցի N 9/2 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 101.24 (մեկ հարյուր մեկ ամբողջ քսանչորս հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին, 78.72 (յոթանասունութ ամբողջ յոթանասուներկու հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով անավարտ բնակելի տունը ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 275879 (երկու հարյուր յոթանասունհինգ հազար ութ հարյուր յոթանասունինը) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Օրինականացման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60 օրվա ընթացքում չվճարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Օրենքով սահմանված կարգով քաղաքացի Աիդա Թելմանի Հովհաննիսյանին տրամադրել անավարտ բնակելի շինությունն ավարտին հասցնելու համար ճարտարապետահատակագծային առաջադրանք անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման և շինարարությունն ավարտելու ժամկետների վերաբերյալ տվյալներով:
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Աիդա Թելմանի Հովհաննիսյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

12.02.2024

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** X **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2024թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«14» փետրվարի 2024 **թվականի** N 122-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԾՆՆԴԱՏԱՆ ՓՈՂՈՑԻ N 9/2 ՀԱՍՑԵԻ ԱՆԱՎԱՐՏ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ 21.61 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 21.61 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ 16.58 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՆԱՎԱՐՏ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի Աիդա Թելմանի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ծննդատան փողոցի N 9/2 հասցեի անավարտ բնակելի տանը կից 21.61 (քսանմեկ ամբողջ վաթսունմեկ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում 2001 թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցվել է 21.61 (քսանմեկ ամբողջ վաթսունմեկ հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին 16.58 (տասնվեց ամբողջ հիսունութ հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով անավարտ բնակելի տուն, որը տիրապետում և օգտագործում է քաղաքացի Աիդա Թելմանի Հովհաննիսյանը:

Նկատի ունենալով, որ շինության պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի, 4-րդ բաժնի 33-րդ կետի և հիմք ընդունելով շինությունը Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող տեղեկանքը N 2023LCZ74Y՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Ծննդատան փողոցի N 9/2 հասցեի անավարտ բնակելի տանը կից 21.61 (քսանմեկ ամբողջ վաթսունմեկ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասը և նրա վրա ինքնակամ կառուցված 21.61 (քսանմեկ ամբողջ վաթսունմեկ հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին 16.58 (տասնվեց ամբողջ հիսունութ հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով անավարտ բնակելի տունը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել քաղաքացի Աիդա Թելմանի Հովհաննիսյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը (պատասխանատու՝ քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** x **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2024թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ***Ո Ր Ո Շ Ո Ւ Մ***

***«14» փետրվարի 2024 թվականի N 421-Ա***

**ՔԱՂԱՔԱՑԻ ԷԹԵՐԻ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԱԼՈՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԲՈՐՅԱՆ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ԱՆՑՈՒՄ N2 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 66.38 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ, ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ 1( ՄԵԿ) ԴՈՒՌԸ, ԻՆՔՆԱԿԱՄ ՓԱԿՎԱԾ 1 (ՄԵԿ) ՊԱՏՈՒՀԱՆԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 53.52 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի Էթերի Անդրանիկի Ալոյանին պատկանող Գյումրի քաղաքի Բորյան փողոց 1-ին անցում N2 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված են 66.38 (վաթսունվեց ամբողջ երեսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով շինություններ, ինքնակամ բացված է 1(մեկ) դուռ, ինքնակամ փակված է 1 (մեկ) պատուհան և օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 53.52(հիսուներեք ամբողջ հիսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամաս:

Քաղաքացի Էթերի Անդրանիկի Ալոյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին, նշված հողամասի և շինությունների նկատմամբ սեփականության իրավունք ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունները չեն գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն հակասում գործող քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, համաձայն Հայաստանին Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի, հիմք ընդունելով ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող 2023AFELNL, 2023VZCPNS, 2023NTZD44 ծածկագրերը, քաղաքացի Էթերի Անդրանիկի Ալոյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականին N25454 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Ճանաչել քաղաքացի Էթերի Անդրանիկի Ալոյանի (ծնված 1973 թվականի օգոստոսի 10-ին) սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Բորյան փողոց 1-ին անցում N2 հասցեի տան հողամասին կից, ավել օգտագործվող 53.52(հիսուներեք ամբողջ հիսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի և դրա վրա առկա շինության նկատմամբ:
2. Քաղաքացի Էթերի Անդրանիկի Ալոյանին պատկանող Գյումրի քաղաքի Բորյան փողոց 1-ին անցում N2 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 66.38 (վաթսունվեց ամբողջ երեսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով շինությունններն, ինքնակամ բացված 1(մեկ) դուռը, ինքնակամ փակված 1 (մեկ) պատուհանը ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 3938(երեք հազար ինը հարյուր երեսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

12.02.2024

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** X **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

***«14» փետրվարի 2024 թվականի N 420-Ա***

**ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՆԱՐԻՆԵ ԱԶԱՏԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԵՎ ՍԵՅՐԱՆ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԽՆԿՈՅԱՆ ՓՈՂՈՑ N5 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 721.51 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (590.5 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քաղաքացիներ Նարինե Ազատի Հակոբյանին և Սեյրան Սերյոժայի Հակոբյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Խնկոյան փողոց N5 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված է 721.51(յոթ հարյուր քսանմեկ ամբողջ հիսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (590.5(հինգ հարյուր իննսուն ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով կիսակառույց բնակելի տուն:

Քաղաքացի Սեյրան Սերյոժայի Հակոբյանը դիմել է նշված շինությունն օրինական ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի, հաշվի առնելով որ կառույցի պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող 2023966JRT ծածկագիրը և քաղաքացի Սեյրան Սերյոժայի Հակոբյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականին N932 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1 Քաղաքացիներ Նարինե Ազատի Հակոբյանին և Սեյրան Սերյոժայի Հակոբյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Խնկոյան փողոց N5 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 721.51(յոթ հարյուր քսանմեկ ամբողջ հիսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (590.5(հինգ հարյուր իննսուն ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով կիսակառույց բնակելի տունը ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 1966115 (մեկ միլիոն ինը հարյուր վաթսունվեց հազար հարյուր տասնհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Օրինականացման վերաբերյալ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարների՝ 60 օրյա ժամկետում չվճարման դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

3. Սահմանված կարգով քաղաքացիներ Նարինե Ազատի Հակոբյանին և Սեյրան Սերյոժայի Հակոբյանին տրամադրել անավարտ շինությունը ավարտին հասցնելու համար ճարտարապետահատակագծային առաջադրանք անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման և շինարարությունն ավարտելու ժամկետների վերաբերյալ տվյալներով:

4 .Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենքով սահմանված կարգով:

12.02.2024

X [signature]

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«14» փետրվարի 2024 **թվականի** N 419 - Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱԽՈՒՐՅԱՆԻ ԽՃՈՒՂԻ 7 ՀԱՍՑԵԻ ՆԿՈՒՂԻ 7,37 և 1-ԻՆ ՀԱՐԿԻ 7,31 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՆԵՐՈՎ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ; 7,37 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՇՎԱՔԱՐԱՆԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ; 267,21 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՆԿՈՒՂԻ, 1-ԻՆ ՀԱՐԿԻ 464,49 ԵՎ 3-ՐԴ ՀԱՐԿԻ 461,01 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՆԵՐՈՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Ախուրյանի խճուղի 7 հասցեի վարչական շենքը ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացիներ Սպարտակ Ազատի Հովհաննիսյանին և Արմենուհի Հովհաննիսյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 1306368 վկայականը):

Քաղաքացի Սպարտակ Ազատի Հովհաննիսյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին Գյումրի քաղաքի Ախուրյանի խճուղի 7 հասցեի նկուղի 7,37 (յոթ ամբողջ երեսունյոթ հարյուրերորդական) և 1-ին հարկի 7,31 (յոթ ամբողջ երեսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսներով աստիճանների; 7,37 (յոթ ամբողջ երեսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով շվաքարանի ; 267,21 (երկու հարյուր վաթսունյոթ ամբողջ քսանմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով նկուղի, 1-ին հարկի 464,49 (չորս հարյուր վաթսունչորս ամբողջ քառասունինը հարյուրերորդական) եվ 3-րդ հարկի 461,01 (չորս հարյուր վաթսունմեկ ամբողջ մեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսներով վարչական շենքի նպատակային նշանակությունները արտադրականի, իսկ 267,21 (երկու հարյուր վաթսունյոթ ամբողջ քսանմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով նկուղի, 1-ին հարկի 464,49 (չորս հարյուր վաթսունչորս ամբողջ քառասունինը հարյուրերորդական) եվ 3-րդ հարկի 461,01 (չորս հարյուր վաթսունմեկ ամբողջ մեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսներով վարչական շենքի գործառական նշանակությունը, որպես արտադրամաս փոփոխելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառական նշանակությունը փոփոխելու կարգի» և հիմք ընդունելով քաղաքացի Սպարտակ Ազատի Հովհաննիսյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականի հունվարի 25-ին N 1516 թվագրմամբ).

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

